ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«2» մարտի 2022 թվական N 197-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 16-ի «Արցախի Հանրապետություն ներմուծվող տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» N 88-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետից հանել «էկոնոմիկայի և» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 2-ի
N 197-Ա որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2021 թվականի
փետրվարի 16-ի N 88-Ա որոշման

.

ԾՐԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրով կանոնակարգվում են տոհմային անասնաբուծության զարգացման և տեղական ցեղերի մթերատվության բարձրացման նպատակով Արցախի Հանրապետություն ներմուծվող տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***հայտատու՝*** տոհմային կենդանիներ ներմուծելու նպատակով նախարարություն դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

2) ***տոհմային կենդանիներ՝*** փաստաթղթով ծագումը վավերացված, վերարտադրության համար օգտագործվող և սահմանված կարգով գրանցված որևէ ցեղի բարձրարժեք գյուղատնտեսական կենդանի.

3) ***գյուղատնտեսական կենդանի՝*** խոշոր եղջերավոր կենդանի, մանր եղջերավոր կենդանի, խոզ, հավ, հնդկահավ, ճագար և մայր մեղու.

4) ***տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորում՝*** տոհմային կենդանիներ ներմուծող ֆիզիկական կամ իրավանական անձանց տոհմային կենդանիների արժեքի մասնակի փոխհատուցում:

2. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Սույն ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր հայտատու տարեկան կարող է ներմուծել բավարարված հայտի քանակությամբ տոհմային կենդանիներ, որոնց համար սահմանվում է սուբսիդավորում արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան՝

1) 700 000 ՀՀ դրամ՝ մեկ գլուխ խոշոր եղջերավոր կենդանու հաշվարկով,

2) 50 000 ՀՀ դրամ՝ մեկ գլուխ մանր եղջերավոր կենդանու հաշվարկով,

3) 200 000 ՀՀ դրամ՝ մեկ գլուխ խոզի հաշվարկով,

4) 5 000 ՀՀ դրամ՝ մեկ թև հավի հաշվարկով,

5) 15 000 ՀՀ դրամ՝ մեկ թև հնդկահավի հաշվարկով,

6) 15 000 ՀՀ դրամ՝ մեկ գլուխ ճագարի հաշվարկով,

7) 35 000 ՀՀ դրամ՝ մեկ մայր մեղուի հաշվարկով:

5. Սույն ծրագրի 4-րդ կետով սահմանված սուբսիդավորումը ստանալու նպատակով հայտատուները նախարարություն են ներկայացնում դիմում-հայտ՝ համաձայն N 1 ձևի:

6. Սույն ծրագրի շրջանակներում նախարարություն ներկայացված դիմում-հայտերի ուսումնասիրման նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովը տանսահինգօրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում հայտատուների կողմից Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 21-ի N 391-Ն որոշմամբ հաստատված անասնաբուծությանը ներկայացվող պարտադիր պահանջներին համապատասխան անասնաբուծության իրականացումը, ցեղի ընտրությունը և տալիս եզրակացություն:

7. Դրական եզրակացություն ստացած հայտատուներին թույլատրվում է իրականացնել տոհմային կենդանիների ներմուծումը:

8. Տոհմային կենդանիները ներմուծելուց հետո, տասը աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն նախարարություն է ներկայացնում՝

1) տոհմային կենդանիների ձեռքբերման պայմանագրի պատճենը.

2) ձեռք բերված տոհմային կենդանիների հավաստագրերը (վկայականը, քարտը).

3) տոհմային կենդանիների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերը՝ վճարման անդորրագիր, հաշիվ ապրանքագիր և այլն.

4) փոխադրող ընկերության հետ պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).

5) տոհմային կենդանիների առողջական վիճակը հավաստող անասնաբուժական վկայականը (արտահանող երկրում տրված ձևը).

6) համայնքում տոհմային կենդանիների հաշվառման տեղեկանքը.

7) գրավոր պարտավորագիր՝ առնվազն հինգ տարի տոհմային կենդանիների բուծմամբ և (կամ) առնվազն 2 տարի թռչնաբուծությամբ պարտադիր զբաղվելու վերաբերյալ.

8) բանկային հաշվեհամարը:

9. Նախարարությունը ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, կնքում է համապատասխան պայմանագրեր և երեք ամսվա ընթացքում հատկացնում համապատասխան ֆինանսական միջոցներ:

10. Արցախի Հանրապետության տարածքում տոհմային կենդանիների բուծմամբ հինգ տարի, իսկ թռչնաբուծությամբ երկու տարի չզբաղվելու դեպքում սույն ծրագրի չիրականացված մասին համապատասխան սուբսիդավորված գումարը ենթակա է

վերադարձման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո երեք ամսվա ընթացքում:

11. Տոհմային կենդանիների հարկադիր սպանդը կամ հիվանդության պատճառով խոտանումը պետք է իրականացվի համայնքը կամ տնտեսությունը սպասարկող անասնաբույժի համապատասխան ակտով:

12. Սույն ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհմային կենդանիները (նույնականացված համարով և փաստաթղթերով) բացառության կարգով օտարելու պայման կարող է հանդիսանալ հայտատուի մահը կամ առողջական ծանր վիճակը: Սույն կետի պայմանով տոհմային կենդանիներին օտարելու և պարտավորությունների փոխանցման դեպքում նոր հայտատուին չի տրամադրվում արժեքի կրկնակի սուբսիդավորում:

13. Գործունեության իրականացման վայրի փոփոխության դեպքում հայտատուները պարտավոր են գրավոր տեղեկացնել նախարարությանը կամ տարածքը սպասարկող անասնաբուժական սպասարկման կայանին:

14. Օտարերկրյա պետություններից ներմուծված տոհմային կենդանիների համար սահմանվում է կարանտին 30 օր տևողությամբ:

15. Արցախի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայանները՝ միջոցառման իրականացման գործընթացի վերահսկման նպատակով յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսի 10-ը, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ ներմուծված տոհմային կենդանիների և դրանց պահվածքի մասին:

16. Սույն ծրագրի շրջանակներում նախարարությունը իրականացնում է մշտադիտարկում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում.

2) բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում.

3)անասնաբուծության վարման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման հնարավորություն.

4) գյուղական վայրերում վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովում.

5) անասնաբուծության մասնագիտացման շնորհիվ հեռագնա արոտների և այլ բնական կերահանդակների առավել արդյունավետ օգտագործում.

6) գյուղական վայրերում նոր աշխատատեղերի ստեղծում.

7) անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում և արտահանման ծավալների ավելացում:

Ձև N 1
Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Դ Ի Մ ՈՒ Մ - Հ Ա Յ Տ

ԱՀ տարածք ներմուծվող տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորում ստանալու վերաբերյալ

Դիմող _____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը)

հեռախոսահամարը _____

Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի

կամ սոցիալական քարտի համարը_____

Գործունեության իրականացման վայրը _____

Խնդրում եմ Ձեզ «Արցախի Հանրապետություն ներմուծվող տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման» ծրագրի համաձայն ԱՀ տարածք ներմուծված տոհմային կենդանիների համար

_____

(տոհմային կենդանիների ցեղը և քանակը)

տրամադրել արժեքի մասնակի սուբսիդավորում:

Ներմուծման ամսաթիվը _____

Դիմում-հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

- տոհմային կենդանիների ձեռքբերման պայմանագրի պատճենը,
- ձեռք բերված տոհմային կենդանիների հավաստագրերը (վկայականը, քարտը),
- տոհմային կենդանիների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերը՝ վճարման անդորրագիր, հաշիվ ապրանքագիր և այլն,
- փոխադրող ընկերության հետ պայմանագրի պատճենը (առկայության դեպքում),
- տոհմային կենդանիների առողջական վիճակը հավաստող անասնաբուժական վկայականը (արտահանող երկրում տրված ձևը ևս),
- համայնքում տոհմային կենդանիների հաշվառման տեղեկանքը,
- բանկային հաշվեհամարը,
- գրավոր պարտավորագիր՝ առնվազն հինգ տարի տոհմային կենդանիների բուծմամբ և (կամ) առնվազն երկու տարի թռչնաբուծությամբ պարտադիր զբաղվելու վերաբերյալ.

Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն (իրավաբանական անձի անվանում))

«____» _____ 20 թ.

Կ.Տ.

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***